Ծովինար Բանուչյան

Բանաստեղծություններ

Ցանկ

Երբեք չմեռնել…
Երջանկությունը
Քո քաղաքում
Քեզ ինչ…
Ինչպես «նահանջն առանց երգի…»
Ապրածի ու չապրածի միջև…
Կյանքը այստեղ է
«Ընկերները»
«Քո մասին»
Մեկը մի քիչ տեղ տար
«Ես չգիտեմ»

Երբեք չմեռնել…

Իմ երևանը հիմա քո ներսում
իրեն ավելի սիրել է տալիս,
իմ Երևանում ես էլ չեմ մրսում,
մրսելս ո՞րն է էս գժված հալիս…

Մի քիչ էլ մնամ, գուցե խենթանամ,
գուցե գրավեմ բոլոր բակերը,
որտեղ կամենամ այնտեղ կմնամ,
ու էլ պետքս չի փողոց փակելը…

Ու մինչև Սարյան, մինչև Փարպեցի
մինչև Սպենդիարյան ու կամ էլ Պուշկին
ես մինչև հոգուս խորքը հարբեցի,
ես մինչև սիրտս գնացի ուշքից…

Եվ այս աստղերի տակ քեզ խոստացա
երբեք չմեռնել…
Ծով alizé
28.04.2018
Երևան

Երջանկությունը

Վերջալույսի հետ այս կիրակին էլ հոգին է փչում,
ու պատուհանս մինչև կփակեմ, քամին այս գարնան
ներս է սողոսկում, ու ձեռքիս գիրքը ծանր է շնչում,
մի քանի էջ էլ, ու այս էջերը միրաժ կդառնան...

ու անդառնալի այս միրաժները կմեխվեն մտքիս,
ու նա կլինի իմ կերպարներից խենթը ամենա,
ու ամեն անգամ կպայծառանան գծերը դեմքիս,
երբ որ ինձ գտնի, երբ որ շուրթերս շոշափի հենց նա...

և հենց քո գրկում նորից կսկսվի գլխապտույտը,
կչարախոսի բախտը ականջիս, որ քեզ չեմ տեսել,
դու կպարեցնես ինձ քո ձեռքերին, ամեն պտույտը
ինձ կհամոզի, որ մեզ վաղուց է կյանքը անտեսել...

այդ պատճառով է, որ ինձ ապրելը երազ է թվում,
քեզ հետ պարելը նման է անվերջ երգող մանեժի,
և երազելը քո մասին արդեն երկար է տևում,
բայց երազում է միայն, որ սերը երբեք չի մերժի...
երջանկությունը...
Ծով alizé
18.03.2018

Քո քաղաքում

Քո քաղաքում իմ ժամանակն ավարտվում է,
ինչու՞...նույնիսկ հրեշտակը իմ չգիտի,
քո քաղաքում հրեշտակները պարտվում են,
քո քաղաքը, որ բացակա տեղն իմ գիտի...

Բայց այդ տեղը դու կլցնես մեկ ուրիշով,
ու լուռումունջ կփշրվեն իմ իրերը,
և չի մնա ինձնից ոչ տուն, ոչ գիրք, ոչ շոր,
և չի փրկի ճամպրուկներս նվիրելը...

Եվ չեն փրկի մեզ անծանոթ այդ բակերը,
մեզ չեն փրկի փողոցները ժամադրության,
քո քաղաքն է, դռներն իմ առաջ փակելը
կվերածես անմեկնելի սովորության...

Քո քաղաքն է խառնարանը այդ լրբերի,
թող քեզ լինի, դու ինքդ քեզ չես հավատում,
գոնե մի օր արցունքները իմ սրբեիր,
համոզվեիր, որ քաղաքում իմ չեն ատում...
23.03.2018
Ծով alizé

****

Քեզ ինչ…

Ինչպես կախվածություն բարակ իմ մատներից,
քեզ հիշելիս անգամ չեն ամրանում ձեռքերս,
ձեռքերը իմ սառած, որ միշտ են մատնել ինձ,
մինչև անգամ ծաղրել ճշմարտություն հերքելս…

և ուժ չկա այդքան...որ գլուխս պահեմ
ու ծնկներիս դնեմ ու լամ ու լամ ու լամ
և թուլանամ այնքան, ծնկներիցս սահեմ
ու անկումի ուժով դեպի վիհը սուրամ...

և երբ արցունք չկա, չկա էլ լացելու,
չկա մեկը՝ հույս ունենամ զարմացնելու,
քեզ ինչ՝ թե ուր հասա...
13.04.2018
Ծով alizé

Ինչպես «նահանջն առանց երգի…»

Ծերանում է ժամանակդ, մանր բանից տխրել էլ չի լինում,
Հիմար բանից ուրախանալ ու կամ կռիվ սարքել չեղած բանից,
Հին քաղաքում ընկերներդ քեզ չեն սպասում, նորում՝ գալիս, գնում,
Ու մնում է միայն ճանապարհը, որով հեռացել ես տանից...

Ճանապարհը, որով դու անցել ես երկար, միանվագ երգի նման,
Անցորդներին բարևել ես ու խուսափել պատմել քո քաղաքից,
Մտածել ես, որ հուշերդ լավ կլինի միշտ անցյալում մնան,
Կարոտներդ խեղդել, դիտավորյալ ուշացել ես պատարագից...

ԻՆչպես «նահանջն առանց երգի», դու փորձել ես միշտ աննկատ մնալ,
Մինչդեռ նրանց թվացել է, թե քո մասին շատ բան գիտեն,
Պետք է կյանքում այնպես ապրել, որ երբ ուզես անհետանալ,

Քեզ գտնելը դժվար լինի, քաղաքներդ քեզ չմատնեն...

Ապրածի ու չապրածի միջև…

Ես ողջ գիշեր ժամանակ եմ սպանել,
Դեգերել եմ ապրած ու չապրածի միջև,
Դիմակներս պատռել, երազներս քամել,
Ու քայլել եմ լուսաբացը մինչև:

Ես ծխել եմ հույսը, տանիքներին պարել,
Ու մայթերին թողել կոշիկներս բոլոր,
Ու դռներին սիրո նամակներ եմ շարել
Ու ժպտացել հարբածներին մոլոր:

Պոռնիկներին կոնֆետներ եմ տվել,
Անտունու հետ ես կիսել եմ հացս,
Կեսգիշերվա մենությանը տրվել
Ու անձրևին վստահել եմ լացս:

Ես ողջ գիշեր ժամանակ եմ սպանել,
Դեգերել եմ ապրած ու չապրածի միջև.
Դիմակներս պատռել, երազներս քամել
Ու քայլել եմ լուսաբացը մինչև:

Կյանքը այստեղ է

Կյանքը այստեղ է, ուր ուշանում եմ,
Ուր նախաճաշել երբեք չեմ հասցնում,
Ուր չեմ տեսնում, որ արդեն գարուն է,
Ուր ժամանակին չեմ անդրադարձվում...
Կյանքը այստեղ է, ուր ինձ լքում են,
Լքում են ներսից, մինչ ես սպասում եմ,
Կյանքը այստեղ է, որտեղ թքում են
Իմ հայացքի մեջ, մինչ արտասվում եմ...
Կյանքը այստեղ է, այս պատերի մեջ,
Այս անզորության կաղապարներում,
Ուր տառապանքը թվում է անվերջ,
Ուր պատրանքներ են իմ շուրջը պարում...
Ես երբեք մեռնել չեմ կարողացել,
Բայց գիտեմ՝ մի օր կավարտվի խաղը,
Ու եթե այսօր ինձ չես մոռացել,
Ընկե՛ր իմ, փորձի՛ր մոռանալ վաղը...

«Ընկերները»

Երբեք հենց այնպես ոչ ոք այս կյանքում քեզ չի գա այցի,
Հեռացումներից դու միշտ էլ սպասիր ինչ-որ ետ դարձի,
Այդ անունները մեկ-մեկ քո մտքով կգան ու կանցնեն,
Որ քո խունացող հիշողության մեջ հուշեր արթնացնեն...
Կհիշես ցավով կամ էլ ժպիտով, կգտնես կամ ոչ,
Նրանք կթվան քեզ շատ կարևոր կամ հյուրեր անկոչ,
Եվ կիսատ բառեր, խոսքեր կամ երազ կլսես աղոտ,
Ու քո մեջ քեզնից անկախ դու կզգաս մի քաղցր կարոտ...
Որ քեզ լքեցին, որ քեզ փրկեցին, մատնեցին կամ էլ,
Որ քեզ ներեցին կամ սովորեցրին հիշաչար լինել,
Այդ ընկերները, որ ինչ-որ մի լույս թողեցին քո մեջ,
Կլինեն կյանքում երբեք չթերթված, անավարտ մի էջ...

«Քո մասին»

Քո մասին էլ ոչինչ չեմ գրում,
Չեմ հիշում, թքած, թե ուր ես,
Քեզ սիրում եմ ու քեզ չեմ սիրում,
Միևնույն ես հիմա, երբ լուռ ես:
Քեզ ատում եմ ամբողջ սրտով,
Ու ինչքան էլ հիմա տառապեմ,
Ես հրճվում եմ այս կորստով,
Ի՞նչ արած, մի քիչ պարապ եմ:
Ես հասել եմ մինչև շունչդ,
Ծխելուդ մեջ խեղդվել արդեն,
Համբուրել եմ վիզդ, դունչդ,
Աչքերդ շուրթերովս թարթել:
Սիրեցի քեզ այնքան, որ էլ
Ուժ չունեմ քեզ այդքան տրվելու,
Քո մասին էլ ոչինչ չեմ գրել,
Քո մասին էլ չի գրվելու...
12. 03. 2017

Մեկը մի քիչ տեղ տար, տեղավորվեինք մենք էլ
ձեր քաղաքում՝ զոռով մեզ օտարած,
ձեզ թողնեինք փաբեր ու բարձրահարկ շենքեր,
իսկ մեզ՝ փողոցները սիրահարված…

Թող լինեինք ձեզնից էլ թույլ, մեզնից ուժեղ
ու պարեինք տանիքներին Երևանի,
մեր պարելուց կյանքում մարդ չի տուժել,
իսկ գիշերվա քամին... բան չէր անի...
Մի քիչ մեզ տեղ տվեք ձեր քաղաքում,
եթե դեռ սիրտ ունեք զարմանալու,
մենք էլ թագավորենք ավերակում,
միևնույն է , երկար չենք մնալու...

Ախր դուք մեզ չեք խնայի, երազելը
ձեզ օտար է, մեզ չեք հավատալու,
մեր հետևից հեշտ էր ավելի վազելը,
մեզ ընդառաջ գալը ձեռք չի տալու:

Մի քիչ մեզ տեղ տվեք, տեղավորվենք մենք էլ
ձեր քաղաքում՝ զոռով մեզ օտարած,
ձեզ կթողնենք փաբեր ու բարձրահարկ շենքեր,
իսկ մեզ՝ փողոցները սիրահարված...
20.02.2018
Ծով alizé

«Ես չգիտեմ»

Ահա նորից ես դառնում եմ նույն կետին
ու այս անգամ մինչև հոգուս խորքը թաց,
իմ խոսքերում չկան իմաստներ հետին,
բայց քո սիրտը ինձ այդպես էլ չկարդաց:

Դու կարծում ես դեռ կարող եմ վստահել
ուրիշ մեկին թուլությունս գլխահակ,
իմ ափերից վաղուց ձեռքերդ սահել
ու դարձել են զարկերակներիս պահակ:

Ես չգիտեմ քանի կյանք դեռ ինձ մնաց,
ինչի՞ համար պիտի ուզես ինձ դատել,
կամ իմ առաջ, կամ քո առաջ կամ նրանց,
ում ես երբեք ոչ սիրել եմ, ոչ ատել ...